



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի  
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի  
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Գրիգոր Գևորգյանի և Արման Սահակյանի անհատական  
դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝  
Գրիգոր Գևորգյանը և Արման Սահակյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատա-  
րան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 15.09.2016թ.)՝  
խնդրելով.

«1. ՀՀ Սահմանադրության 23-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և  
անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մասը  
այնքանով, որքանով չի նախատեսում «ատելության խոսք» և «խտրականության  
հրահրում» եզրույթները և դրանց սահմանումները:

2. ՀՀ Սահմանադրության 23-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և  
անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 11-րդ մա-

սը այնքանով, որքանով ատելության և խտրականության հրահրումը չի նախատեսում որպես փոխհատուցման պարտադիր չափանիշ»:

Դիմողները, վկայակոչելով մի շարք միջազգային իրավական ակտեր, նշում են, որ վերջիններս պատվիրակում են պետություններին ստեղծել նորմատիվ իրավական բազա՝ թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական իրավունքում, ատելության խոսքից տուժածների պաշտպանության համար՝ ընդգծելով հատկապես սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքը:

Ըստ դիմողների՝ ՀՀ իրավական համակարգը չի ներառում «ատելության խոսք» եզրույթի սահմանումը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով որոշումը, որով վճռաբեկ դատարանը վիրավորանքի տիրույթում է տեսել նաև անձին ատելության առարկայի վերածելը, չի կարող ունենալ նախադեպային կամ իրավական փաստարկի նշանակություն, քանի որ նշված գործով ատելության խոսքի հանգամանքը բացակայում է, հետևաբար՝ նաև իրավական զարգացում չի ունեցել:

Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «վիրավորանք» եզրույթում «ատելության խոսք» և «խտրականության հրահրում» եզրույթները և դրանց սահմանումն ամրագրված չլինելու պայմաններում, ինչպես նաև նույն հոդվածի 11-րդ մասում ատելության և խտրականության հիմքը որպես փոխհատուցման չափ սահմանված չլինելու պայմաններում իրենք «հնարավորություն չունեն իրականացնելու իրենց արժանապատվությանը հասցված վնասի արդյունավետ պաշտպանություն և վերականգնելու իրենց խաթարված իրավունքները ամբողջությամբ», այսինքն՝ առկա իրավակարգավորումները և առկա դատական պրակտիկան չեն ստեղծում պայմաններ իրենց իրավունքներն ամբողջությամբ իրականացնելու համար:

Դիմողները կարծում են, որ իրենք հնարավորություն չեն ունեցել վերականգնելու իրենց արժանապատվությանը պատճառված վնասը, որը ծագել է ատելության և խտրականության հրահրումով, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի ներկա կարգավորումից, խախտվել է իրենց արդար դատաքննության իրավունքը:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմումն ակնհայտ անհիմն է:

Այսպես, այս դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողները փորձում են հիմնավորել ենթադրյալ օրենսդրական բացի լույսի ներքո: Օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք: Չարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողների առաջ քաշած փաստարկներն առ այն, որ վիճարկվող հոդվածում առկա իրավական բացով պայմանավորված ստեղծվել է մի իրավիճակ, որի պայմաններում «ատելության խոսք» և «խտրականության հրահրում» եզրույթները և դրանց սահմանումները խնդրո առարկա հոդվածում ամրագրված չլինելու, ինչպես նաև նույն հոդվածի 11-րդ մասում ատելության և խտրականության հիմքը որպես փոխհատուցման չափ սահմանված չլինելու պայմաններում իրենք հնարավորություն չունեն իրականացնելու իրենց արժանապատվությանը հասցված վնասի արդյունավետ պաշտպանություն և վերականգնելու իրենց խաթարված իրավունքներն ամբողջությամբ, ակնհայտ անհիմն են, քանի որ մատնանշվող «խնդիրը», եթե այդպիսին առկա է, վերաբերում է ողջ ներպետական օրենսդրությանը, այլ ոչ թե դիմողների կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կոնկրետ հոդվածին: Դիմողների կողմից առաջ քաշված ենթադրյալ օրենսդրական բացը՝ «ատելության խոսք» և «խտրականության հրահրում» եզրույթների ամրագրման առումով, հավասարապես կարող է վերաբերել և՛ քրեական, և՛ քաղաքացիական, և՛ վարչական օրենսդրությանը, հանգամանք, որը մատնանշել են դիմողները նաև վիճարկվող դրույթի վերաբերյալ իրենց փաստարկները շարադրելիս:

Բացի դրանից, դիմողների կողմից առաջ քաշված «ատելության հրահրման փաստին» անդրադառնալով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ. «... ներկայացված հայցապահանջների բավարարման համար արդեն իսկ բավարար է եղել վիրավորանքի և զրպարտության միջոցով հայցվորների պատիվն ու արժանապատվությունը արատավորելու փաստերի հաստատումը, ինչն էլ էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար: Այսինքն՝ նման պայմաններում ատելության հրահրման փաստի հաստատում՝ հայցապահանջի բավարարման համար, այլևս անհրաժեշտ չի եղել և նման փաստի չհաստատումը որևէ կերպ գործի ելքի վրա ազդեցություն չի ունեցել»: Հետևաբար, խնդրո առարկա գործով վիճարկվող իրավակարգավորումն արդեն իսկ իրավունք է ընձեռում անձին՝ պաշտպանություն հայցելու ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման պարագայում՝ «վիրավորանք» և «զրպարտություն» եզրույթների համատեքստում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

Գրիգոր Գևորգյանի և Արման Սահակյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

4 հոկտեմբերի 2016 թվականի  
ԵՊՀ ԴՊ/2-27